ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՃԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՃԱՓ ՀԱՄԱՅՆՔ,ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ 27

ՈՐՈՇՈՒՄ N 23

18.11.2016թ

Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի հաստատման հարցի մասին

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի և <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթներով համայնքի ավագանին որոշում է.

1 ա/համայնքի տարածքում նոր կառուցվող շինությունների /ներառյալ ժամանակավոր/ շինարարության սկսման թույլտվության համար սահմանել տեղական տուրք 5000/հինգ հազար/դրամ յուրաքանչյուր շինության համար:

բ/ համայնքի տարածքում հին շինությունների քանդման թույլտվության համար սահմանել տեղական տուրք 5000/հինգ հազար/դրամ յուրաքանչյուր շինության համար:

2. ա/ համայնքի տարածքում ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար սահմանել տեղական տուրք յուրաքանչյուր խանութի համար տարեկան 4000/չորս հազար/ դրամ,ընդամենը տարեկան 12000/տասներկու հազար/ դրամ:

բ/ համայնքի տարածքում ծխախոտային արտադրանքի վաճառքի թույլտվության համար սահմանել տեղական տուրք յուրաքանչյուր խանութի համար տարեկան 6000/վեց հազար / դրամ,ընդամենը տարեկան 18.000/տասնութ հազար/դրամ:

Համայնքում ընդամենը 30.000 /երեսուն հազար/ դրամ:

3.Որոշումը ուժի մեջ է մտնում 01.01.2017թ.-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՍԻՄՈՆՅԱՆ